# ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

**01.01.2011թ. – 01.04.2011թ. ընկած ժամանակահատվածում քաղաքապետարանի կատարած աշխատանքները**

Դիլիջան համայնքի 2011թ. բյուջեն մշակվել է՝ հիմք ունենալով համայնքի 2009-2012թթ. քառամյա զարգացման ծրագիրը:
Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների խնայողական օգտագործումից:
2011թ. առաջին եռամսյակում տեղական մուտքերի արդյունավետ հավաքագրման շնորհիվ հավաքագրվել է 137032.8 հազ.դրամի եկամուտ, որը հնարավորություն է տալիս ավելի իրատեսորեն կանխագծելու առաջիկա անելիքները:

Դիլիջան համայնքի բյուջեի եկամուտների կատարողականը
01.04.2011թ. դրությամբ

| Եկամտատեսակ | Մարտի պլանը աճողական տեսքով (հազ.դրամ) | Մարտի կատարողականը աճողական տեսքով (հազ.դրամ) | Փաստացին պլանի նկատմամբ |
|---|---|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ | 141891.85 | 137032.78 | 96.58% |
| 1.1 ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ | 5700.00 | 7188.68 | 126.12% |
| 1.2 ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ | 3000.00 | 2598.01 | 86.60% |
| ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ | 3917.00 | 2838.62 | 72.47% |
| ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ | 1272.00 | 862.00 | 69.34% |
| 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 39382.30 | 39382.30 | 100.00% |
| 3.3 ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 3700.00 | 3866.60 | 104.50% |
| ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿ-ԻՑ ԵՎ ԾԱՌԱՅ-ՐԻ ՄԱՏՈՒՑ-ԻՑ ԵԿԱՄ-ՆԵՐ | 339.50 | 340.10 | 100.18% |
| 3.5 ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ | 2331.05 | 3333.00 | 142.98% |
| 3.6 ՄՈՒՏՔԵՐ ՏՈՒՅԺԵՐԻՑ, ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻՑ | 750.00 | 215.25 | 28.70% |
| ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 81500.00 | 76388.21 | 93.73% |
| ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 79000.00 | 76177.57 | 96.43% |
| ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 2500.00 | 210.65 | 8.43% |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 141891.85 | 137032.78 | 96.58% |

## Դիլիջան համայնքի բյուջեի հունիս ամսվա ծախսերի կատարողականը 01.04.2011թ. դրությամբ

| Ծախսատեսակ / Հիմնարկ | Ճշտված պլան (դրամ) | Փաստացի ծախսը (դրամ) | Ծախսը պլանի նկատմամբ |
|---|---|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ ՝ | 400529912.00 | 52161096.00 | 13.02 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Աղբահանում) | 10816750.00 | 5260682.00 | 48.63 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Այլ մշակութային կազմակերպություններ) | 196250.00 | 196250.00 | 100.00 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Արտադպրոցական դաստիարակություն) | 17716011.00 | 6653852.00 | 37.56 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ) | 344075.00 | 73000.00 | 21.22 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Բնակարանային շինարարություն) | 6600000.00 | 0.00 | 0.00 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Գրադարաններ) | 2460280.00 | 2450874.00 | 99.62 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Դիլիջանի քաղաքապետարան) | 72339231.00 | 13551287.00 | 18.73 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Ընդհ.բնույթի այլ ծառայություններ) | 422300.00 | 352300.00 | 83.42 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Ընդհ.բնույթի հանր.ծառայություններ) | 1012000.00 | 934929.00 | 92.38 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Ընտանիքի անդամներ և զավակներ) | 800000.00 | 640000.00 | 80.00 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Թանգարաններ և ցուցասրահներ) | 5187300.00 | 1969985.00 | 37.98 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ) | 178500.00 | 0.00 | 0.00 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Հրատարակչություններ,խմբագրություններ) | 76400.00 | 47399.00 | 62.04 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Ճանապարհային տրանսպորտ) (900402057013) | 206500000.00 | 0.00 | 0.00 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Մշակույթի տներ, ակումբներ) | 2222476.00 | 2141894.00 | 96.37 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Նախադպրոցական կրթություն) | 43816614.00 | 12609506.00 | 28.78 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Նավթամթերք և բնական գազ) | 5205800.00 | 0.00 | 0.00 % |

| | | | |
|---|---|---|---|
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Շրջակա միջ.պաշտպանություն) | 500000.00 | 0.00 | 0.00 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Սոցիալական հատուկ արտոնություններ) | 494000.00 | 370000.00 | 74.90 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Վարչ.բյուջեի պահուստային ֆոնդ) | 970.00 | 0.00 | 0.00 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Փողոցների լուսավորում) | 19427138.00 | 4909138.00 | 25.27 % |
| ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդ) | 4213817.00 | 0.00 | 0.00 % |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | 400529912.00 | 52161096.00 | 13.02 % |

Քաղաքապետարանի ուշադրության կենտրոնում են սոցիալապես անապահով ընտանիքները: 25 անապահով ընտանիքների տրվել է դրամական օգնություն:

Յուրաքանչյուր նորածին երեխաների համար 35 ընտանիքի տրվել է միանվագ դրամական օգնություն:

Դիլիջան քաղաքում գործող <Հույսի Կամուրջ> հասարակական կազմակերպություն հաճախող հաշմանդամ երեխաների ուսումնադաստիարակչական աշխատանքները առավել արդյունավետ կազմակերպելու և անցկացնելու համար համայնքի բյուջեից յուրաքանչյուր ամիս ցուցաբերվում է ֆինանսական աջակցություն:

Դիլիջան քաղաքային համայնքի ենթակայության նախադպրոցական հիմնարկությունների թվով 85 աշխատողների տրվել է ֆինանսական աջակցություն հերթական բժշկական ստուգումների անցկացման համար:

Հունվարի 27-ին Դիլիջանի զորամասում համայնքի ղեկավարի աջակցությամբ կազմակերպվել է համերգ-հանդիպում նվիրված բանակի օրվան: Հայրենական մեծ պատերազմի կին մասնակիցներին մարտի 8-ի կապակցությամբ տրամադրվել է դրամական օգնություն:

<Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն ինկ> կազմակերպության Հայաստանի մասնաճյուղի և Դիլիջանի քաղաքապետարանի միջև կնքվել է համագործակցության հուշագիր, որի նպատակն է աջակցել Դիլիջան քաղաքի թիվ 12 մանկապարտեզի վերանորոգման աշխատանքներին:Ծրագրի ընդհանուր արժեքը 43000.0 հազ.դրամ է, որից 20000.0հազ.դրամը համայնքի ներդրումը:

Քաղաքապետարանը միջոցներ է ձեռնարկում իր ենթակայության ենթակառույցների նյութատեխնիկական բազայի ամրապնդման ուղղությամբ:

Զգալի աշխատանքներ են իրականացվել լուսավորության, աղբահանության և սանիտարական մաքրման բարելավման, այն առողջարանային քաղաքին վայել կազմակերպելու ուղղությամբ:

Քաղաքապետարանի կողմից անհրաժեշտ ուշադրություն է ցուցաբերվում սպորտի զարգացմանը :

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ